**Արձանագրություն N 4**

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի / նախաորակավորման/ /ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

Երկիր

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան

31 մարտի 2026թ.

**Ընթացակարգ**

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի նախաորակավորման փուլ:

**Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

**Ծրագրի անվանումը**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**Նիստին մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ա. Առուշանյանը, Մ. Բաբայանը և Ա. Սերգոյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Մասնակիցների կողմից հայտում նախաորակավորման հայտարարությամբ պահանջվող փաստաթղթերի շտկման վերաբերյալ**

---

Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ((WC-SPOT-26/1-TA) ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի հայտարարության 20-րդ կետը հանձնաժողովը (27.03.2026թ.) մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը, (որի մասին հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մասնակցին) առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 30.03.2026թ շտկել անհամապատասխանությունները:

Հայտատու կազմակերպություններ՝ Fichtner GmbH & Co. KG-ն և «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊ ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

**Մասնակիցների կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում նախաորակավորման հայտարարությամբ պահանջվող փաստաթղթերի առկայությունը.**

---

Հայտատուների կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը:

**Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

Հայտատուների կողմից ներկայացված հայտերում առկա պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են նախաորակավորման ընթացակարգի պահանջներին:

**Նախաորակավորման ընթացակարգի արդյունքների մասին**

---

**- Գնահատող հանձնաժողովը որոշումը.**

1. ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով բաց մրցույթի նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով մասնակիցների մասնակցելու իրավունքը և որակավորումը համապատասխանում են նախաորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին և հանձնաժողովի կողմից գնահատվում են բավարար:

**2.** Հիմք ընդունելով վերը նշվածը և նախաորակավորման հայտարարության 23-րդ կետը հաստատել նախաորակավորված մասնակիցների ցուցակը.

| Նախաորակավորված մասնակիցների ցուցակ | |
|---|---|
| Հ/Հ | Կազմակերպություններ |
| 1 | Fichtner GmbH & Co. KG-ն («Ի Էյ Էներջի Ըդվայզորի» ՍՊԸ՝ որպես «Ենթակապալառու») |
| 2 | «Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ |

3. Նախաորակավորված մասնակիցներին էլեկտրոնային ձևով տրամադրել հրավերը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ________ Տ. Քանքանյան

անդամներ ________ Ա. Մարգարյան

________ Ա. Սիմոնյան

________ Ս. Ասրյան

________ Ա. Առուշանյան

________ Մ. Բաբայան

________ Ա. Սերգոյան

Քարտուղար ________ Ա. Սարգսյան